ՆՈՐ ԳՐՔԵՐ

Գրախանութներում վերջերս հայտնված Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտություն» աշխատության երկրորդ հատորը, որն ընդգրկում է միջնադարյան հայ բանաստեղծ ու մատենագիր Առաքել Սյունեցուց մինչև կրոնական-մշակութային գործիչ Բեատրիկե Հռովմայեցին, բնականոն շարունակությունն է հանդիսանում նույն հեղինակի՝ նույն խորագիրը կրող աշխատության առաջին հատորի, որը, ինչպես հայտնի է, հրատարակվել է 1959 թվականին։ Այս պատճառով էլ խոսել Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտության» երկրորդ հատորի մասին, նշանակում է ավել կամ պակաս չափով անդրադառնալ նաև նույն աշխատության առաջին հատորին, որովհետև անկյունաքարային բնույթի մի շարք հարցերի պատասխանը տրված է դեռ այնտեղ։

Թե որն է եղել իր աշխատության բնույթն ու նպատակադրումը, կամ ժամանակակից բառերով ասած՝ իր «Հայկական մատենագիտության» գիտական պլանը, – այս հարցին Անասյանը պատասխանում է առաջին հատորի առաջաբանում։ Այսինքն. տալ մինչև տասնիններորդ դարն ընկած բոլոր հայ գրողների աշխատություններն ու այդ աշխատությունների մասին հայ և օտարազգի պարբերականներում ու առանձին գրքերով հրատարակված գրախոսականները, տալ օտար լեզուներից տասնինը դարերի ընթացքում հայերեն կատարված բոլոր նշանավոր գործերի թարգմանություններն ու նրանց մասին հրատարակված բոլոր աշխատություններն ու գրախոսականները։ Այլ կերպ ասած՝ Հակոբ Անասյանը նպատակ է ունեցել կազմել մոտ հազար ինը հարյուր տարվա հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության մատենագիտությունը։ Գիտական աշխատանքի մի պլան էր սա, որը եթե հեղինակը հաստատման համար ներկայացներ որևէ ինստիտուտի գիտական խորհրդին, վստահորեն կարելի է ասել, որ նրան քաղաքավարի հեգնանքով կմերժեին։ Որովհետև տասնինը դարերի հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մատենագիտությունը կազմելը ոչ միայն վեր է մեկ անհատի ուժերից, ինչպիսի կարողություններ էլ նա ունենալու լինի, այլև այդ անելը թերևս վեր է անգամ մի ամբողջ ինստիտուտի հնարավորություններից։ Սակայն անհավատալի իրականությունը փաստ է դարձել։ Այսօր արդեն ընթերցողների սեղանին

է «Հայկական մատենագիտության» երկրորդ գիրքը, շուրջ 1500 էջ ծավալով և հեղինակը ջանասիրաբար շարունակում է աշխատանքները հետագա հատորների պատրաստման համար։

Որպեսզի կարողանանք հասկանալ գիտական հրաշք հիշեցնող այս մեծագործությունը ծնող ներքին խթանիչ ուժը, մենք պետք է ասենք, որ Հակոբ Անասյանը Վենետիկի Մխիթարյան միաբանության սաներից է։ Նա սովորել է միաբանության համբավավոր Մուրադ-Ռափայելյան վարժարանում, և ապա, դարձյալ Մխիթարյանների հսկողության ներքո, կատարելագործել է իր ուսումը Փարիզում։ Իսկ Մխիթարյանների մոտ դաստիարակվելը որոշակի իմաստ ու ներքին մեծ բովանդակություն ունի մանավանդ գիտության այն բնագավառի համար, որին իրեն նվիրել է Անասյանը։ Դա նշանակում է աշխատանքային ներքին կայուն կարգապահություն, համառ ու անդադրում պրպտումներ կատարելու դաստիարակություն, իր ու իր գործի նկատմամբ անողոք խստապահանջություն։ Դա նաև նշանակում է լեզուների քաջագիտակություն, իսկ հանրահայտ է, որ Հակոբ Անասյանն տիրապետում է եվրոպական ու ասիական վեց լեզուների, անդադրում աշխատասիրություն, – բոլորը գիտեն, որ Անասյանի համար աշխատանքային օրը բաղկացած է 14-15 և ավելի ժամերից, - և բոլորանվեր նվիրումն իր նախընտրած գործին. հիշեցնենք, որ իր գիտական գործունեության շուրջ հիսուն տարիների ընթացքում Անասյանը «Հայկական մատենագիտությունից» բացի գրեթե ուրիշ ոչնչով չի զբաղվել։ Այս է, որ իր սաների մոտ ջանասիրաբար դաստիարակում է Մխիթարյան միաբանության դպրոցը, և այսօր, իր գործով Անասյանը պատիվ է բերում ոչ միայն իր դպրոցին ու ուսուցիչներին, այլև սովետահայ մատենագիտական-բանասիրական մտքին։

Ըստ հեղինակի նախնական մտահղացման, ամբողջ «Հայկական մատենագիտությունը» պետք է բաղկացած լինի տաս հատորից, որից, ինչպես արդեն ասացինք, լույս աշխարհ են եկել երկուսը։ Բայց նույնիսկ այսպիսի թերավարտ վիճակում, Անասյանի «Հայկական մատենագիտությունը» տեղեկատու-բացատրական բնույթի այնպիսի մի գանձարան է, որի նմանը չի ունեցել հայ մշակույթը՝ ի սկզբանե առ այսօր, և որը անգնահատելի օգնական է առանց բացառության բոլորի համար, ովքեր

ցանկանում են զբաղվել հայագիտությամբ։ Ագաթանգեղոսով զբաղվել ցանկացող պատմաբանն, օրինակ, բավական է, որ բանա «Հայկական մատենագիտության» համապատասխան գլուխը և ամփոփիչ տեղեկություններ կստանա նախ՝ Ագաթանգեղոսի անձնավորության մասին, ապա կիմանա նրա պատմության բոլոր հրատարակությունների մասին, ի սկզբանե մինչև 19-րդ դարը, և ապա կծանոթանա այն բոլոր ուսումնասիրությունների ու հոդվածների հետ, որոնք երբևէ գրվել են Ագաթանգեղոսի մասին։ Հայ մամուլի պատմաբանը հայկական առաջին՝ «Ազդարար» ամսագրի մասին նյութեր քաղելու համար ընդամենը պետք է բանա «Հայկական մատենագիտության» համապատասխան՝ «Ազդարար» բաժինը։ Այստեղից նա կիմանա ամսագրի երկու տարվա նյութերի լիակատար ցանկը, ապա ձեռքի տակ կունենա այն բոլոր հոդվածները, ուսումնասիրությունները, աշխատությունները, որոնք գրվել են «Ազդարարի» առիթով։ Եվ վերջապես, լեզվաբան-բառարանագետը հայկական հին և նոր ժամանակների բառարանների մասին անբավ նյութ կարող է քաղել «Հայկական մատենագիտության» «Բառարանագրական նյութեր» բաժնից։ Այստեղից նա կիմանա, որ սկզբնական շրջանում հայկական բառարանները այս կամ այն գործին կցված և այդ գործում եղած անհասկանալի բառերը բացատրող՝ հաճախ մի քանի թերթից բաղկացած բառաթերթեր են եղել։ Հետագայում բառարանը թեև գիտակցվել է որպես ինքնուրույն տեղեկատու ձեռնարկ, բայց հիմնականում բացատրել է Աստվածաշնչի, հայ դասականների, այլևայլ թարգմանածո գրքերի մեջ պատահող խրթին բառերն ու դարձվածքները։ Արդեն 16-րդ դարում «Գանձ հայոց լեզվի» կամ պարզապես «Գանձարան» խորագրով սկսում են հանդես գալ բառարաններ, որոնք ընդգրկում են գրաբար լեզվի՝ ըստ հնարավորին լրիվ բառամթերքը, դարձյալ գրաբար տրվող համապատասխան բացատրականներով։ 18-19-րդ դարերում բառարանագրությունն ավելի է ընդարձակվում։ Արդեն սկսում են հանդես գալ գիտության այս կամ այն բնագավառին վերաբերվող ճյուղային բառարաններ, ինչպես օրինակ, «Բառք ոմանց կենդանյաց ըստ բնազննությանց», Պոլիս, 1701 թ., կամ «Բառք խոտոց ծաղկանց և բուսոց ոմանց», Պոլիս, 1728 թ., կամ «Բառգիրք դեղոց, զոր ընտրյալ են իմաստունքն և կարգեալ ճշմարտությամբ» և այլն։

Կարելի է էլի օրինակներ բերել, սակայն ասվածն էլ բավական է ցույց տալու համար, որ Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտություն» աշխատության այս երկրորդ հատորը, ինչպես, ի դեպ և առաջինը, վիթխարի ներդրում է հայ գիտա-բանասիրական գրականության անդաստանում: Մեզ մնում է այս առիթով շնորհավորել ընկեր Անասյանին և ցանկանալ նրան քաջառողջություն, որպեսզի նա կարողանա բարեհաջող կերպով ավարտին հասցնել իր մեծ մտահղացումը:

Եթե այս բնույթն ու բանասիրական այս նպատակաուղղվածությունն ունի Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտության» երկրորդ հատորը, ապա այդ գրքից քիչ ավելի վաղ հրատարակված «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» աշխատությանը արդեն այլ խնդիրներ էր վերապահված:

«Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» կազմել են լեզվաբաններ Աշոտ Սուքիասյանն ու Սերգեյ Գալստյանը. երկու շնորհալի մասնագետներ, որոնց գիտական ուղին չի սկսվել հիշյալ դարձվածաբանական բառարանով և չի էլ ավարտվելու դրանով: Ներկայացվող «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» Աշոտ Սուքիասյանի և Սերգեյ Գալստյանի գիտա-լեզվաբանական կարողությունների դրսևորումներից մեկն է, և վստահորեն կարելի է ասել, ամենաբարձր դրսևորումներից մեկը:

Երկու հեղինակների՝ առաջաբանում հայտնած այն միտքը, որ «դարձվածաբանական բառարանի կազմելը կապվում է զգալի դժվարությունների հետ» պետք է ընկալել այդ արտահայտության ամենահամեստ իմաստով: Որովհետև ոչ միայն անհրաժեշտ էր կարդալ ամբողջ հայ գրականությունն ու հատ-հատ դուրս գրել այնտեղ հանդիպող բոլոր հայկական դարձվածները, ոչ միայն այլևայլ միջոցներով անհրաժեշտ էր գիտականորեն ճշգրտել և ուրեմն առավել քան ճշգրտված ձևով տալ նրանց իմաստները, այլև, որ թերևս ամենից կարևորն էր, մինչև այսօր դեռ ճշգրտված չէր «դարձված» հասկացողության իմաստը: Որովհետև եթե ունենք, օրինակ, «Լեղին ճաքել» արտահայտությունը, որ նշանակում է «վախենալ», ունենք «Կորեկ ծակող», որ նշանակում է «ագահ», ունենք «Համը հանել», այսինքն՝ ձանձրացնել, ունենք «Ձեռ առնել», այսինքն՝ «ծաղրել» արտահայտությունները և այլն, ապա դրանց դարձված լինելը,

այսինքն՝ բառային տվյալ կապակցության միջոցով փոխաբերական ճշմարտության արտահայտիչ լինելը, որևէ վիճարկման ենթակա չէ: Հարցն անհամեմատ բարդանում է և հետևաբար գիտական մանրակրկիտ քննություն է պահանջում այն դեպքում, երբ բառային կապակցությունները քիչ ավելի ինքնատիպ բնույթ են ունենում: ՈՒՆենք, օրինակ, «Կորած մարդ» արտահայտությունը՝«խորտակված մարդու» կամ «ձախողված մարդու» իմաստով: ՈՒՆենք «Հեռվից սկսել» արտահայտությունը, հենց այդ, այսինքն, խոսքը կամ գործը հեռվից սկսելու իմաստով և այլն, որոնք արդեն դուրս են եկել դարձվածի մեզ հայտնի և ընդունված գիտա-լեզվաբանական սահմաններից և հայտ են ներկայացնում տվյալ բնագավառում արդեն նոր որակ ու երևույթ լինելու մասին: Եվ անշուշտ, ճիշտ են վարվել հեղինակները, երբ բառարանում առատորեն ընդգրկել են նաև այդ կարգի դարձվածները, որն, իհարկե, ներքին ավելի մեծ հարստություն է բերում ամբողջ գործին:

Հայոց լեզվի դարձվածաբանական սույն բառարանը իր հետ անվիճելիորեն բերում է մի կարևոր պահանջ՝ այդ դարձվածները պատմա-լեզվաբանական քննության նյութ դարձնելու անհրաժեշտությունը: Այդպիսի քննության հետևանքով հնարավոր կլինի ուսումնասիրել նրանց անցած պատմական ճանապարհը, պարզել նրանց ազդեցությունը հայոց լեզվի և հայ մշակույթի վրա, բացահայտել դարձվածի՝ իբրև մտածողության միավորի դերը ժողովրդի հասարակահայեցության մեջ: Իսկ որ դա անելու կարիքն անպայման կա, կարող է բավարար հստակությամբ երևալ թեկուզ հետևյալ մեկ օրինակով:

Մեր թվականությունից առաջ առաջին դարում թագավորած Տիգրան Երկրորդ թագավորի արքունիքում, արքայի հետ խոսելու կամ նրան վկայակոչելու համար օգտագործվում էր «Իմ արև» ոճը: Թագավորին ուղղվող բոլոր դիմումները, օրինակ, պետք է սկսվեին «Թող ապրի իմ արևը» ձևով, եթե անհրաժեշտ էր ասել «Արքան գիտի», ասվում էր «Իմ արևը գիտե», եթե պետք էր շեշտել թագավորի ներկայությունը, գործածվում էր «Իմ արևը վկա է», թագավորի մահը նշվում էր «Իմ արևը մեռավ» ձևով և այլն:

Արդ՝ ժամանակակից հայերենին ծանոթ ամեն ոք գիտե, որ մեր լեզվում լայնորեն կիրառվում են «արևդ ապրի», «արևս վկա», «արևս մեռնի» և այլ այս կարգի դարձվածները։ Ծագում է գայթակղիչ մի հարց։ Լեզվական-բանասիրական ի՞նչ ճանապարհ են անցել հիշյալ արտահայտությունները՝ թագավորին դիմելու հարգական ձևից սկսած, մինչև լեզվական դարձված դառնալը։ Արդյոք սա չէ՞ դարձվածների առաջացման ձևերից մեկը հայոց լեզվում կամ առհասարակ լեզուներում։

Այս և այլ կարգի հարցերը ծնվում են անմիջապես, երբ թեկուզ թեթևակիորեն ծանոթանում ես Սուքիասյանի և Գալստյանի կազմած «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանին»։ Եվ ծանոթանալով բառարանին տարակույս չի մնում, որ դարձվածների հետ առնչվող բոլոր այդ կարգի հարցերի մասնագետ պատասխանողները լինելու են հենց իրենք՝ հեղինակները։ Որովհետև բառարանում ընդգրկված նյութը ներկայացված է այնպիսի բարեխղճությամբ և բարձր մակարդակով, որ Աշոտ Սուքիասյանին և Սերգեյ Գալստյանին հենց ինքը՝ իրենց իսկ հավաքած նյութն է թելադրում զբաղվել նրանց տեսական-լեզվաբանական ուսումնասիրությամբ։ Երկու գիտնականներն էլ լիուլի ի վիճակի են գիտական խղճմիտ ուսումնասիրության նյութ դարձնելու հայկական դարձվածները, իսկ երևույթի բնականոն հետևանքն այն կլինի, որ հայ ընթերցող ու գիտական հասարակայնությունը կունենա իր լեզվի դարձվածները քննող արժեքավոր մի աշխատություն,իսկ բացառված չէ նաև աշխատություններ, որի պակասը վաղուց է զգացնել տալիս իրեն։